

## «Արորդիների ուխտ»՝ նեոհեթանոսությունը Հայաստանում

---

Յուլյա Անտոնյան,

*ԵՊՀ դասախոս*

«Հեթանոս» բառը հասարակության լայն զանգվածներին հայտնի է որպես նախաքրիստոնեական հավատալիքների ու պաշտամունքների ամբողջության անվանում: Նրա ակունքը հունարեն «էնոս» բառն է, որն ուղղակիորեն նշանակում է «ազգ», «ժողովուրդ»: Քրիստոնեական աշխարհընկալման մեջ այդ եզրույթը միշտ ունեցել է բացասական երանգավորում, քանի որ «հեթանոսությունը» հակադրում էին քրիստոնեությանը, որը համարվում էր միակ ճշմարիտ կրոնական համակարգը:

Այդ եզրույթի գիտական գործածությունը գնալով սահմանափակվում է, քանի որ այն պարունակում է ավելի շատ արժևորում, քան բովանդակային նկարագրություն: Սակայն գնալով աճում է նրա մշակութային կիրառությունը, քանի որ 20-րդ դարը դարձավ քրիստոնեության ճգնաժամի դար և, ի թիվս այդ ճգնաժամը մատնանշող այլ երևույթների, աշխարհի առավել քրիստոնեացված տարածաշրջաններում սաղմնավորվեցին և սկսեցին զարգանալ կրոնական շարժումներ, որոնց հիմքում ընկած է «վերադարձի» գաղափարը դեպի մարդկության «բնածին» արժեքները, որոնք հակադրվում են ժամանակակից արևմտյան եվրասամերիկյան քաղաքակրթությանը, որի հիմնասյուներից է քրիստոնեությունը: Այդ շարժումները շատ խայտաբղետ պատկեր են կազմում շեշտադրված գաղափարների, պրակտիկաների, համայնքի կազմակերպվածության, հիերարխիկ կառուցվածքի, գրավոր աղբյուրների, առաքելական գործունեության և այլ բաղադրամասերի տեսակետից: Նրանց միավորում է այն, որ «խսկական» կրոնի ակունքները բոլորը փնտրում են անցյալում՝ վկայակոչելով «նախնիների» փորձն ու իմաստությունը: Գրավոր կամ հնագիտական աղբյուրներից քաղած սակավաթիվ նյութերի հիման վրա այս շարժումների ակտիվիստները փորձում են կառուցել նոր համակարգ, որն իրենց պատկերացմամբ «հնի վերականգնում կամ վերակազմում է»: Հոբսբաումը ժամանակին առաջ է քաշել «հորինված ավանդույթ» հասկացությունը, որով կարելի է բնորոշել նման երևույթները: «Հորինված ավանդույթ» նշանակում է նոր, հորինված գաղափար, պատկերացում կամ պրակտիկա, որը «հնի» կարգավիճակ է ստանում և որի նպատակն է օրինականացնել, տեղայնացնել այս կամ այն տարածվելիք գաղափարախոսությունը: Հեթանոսական շարժումները լավագույնս բնութագրվում են հենց այդ եզրույթի օգնությամբ, և դա է պատճառը որ նման շարժումների անվանումներից առաջ դրվում է «նեո» (նոր) մասնիկը (նեոպագանիզմ, նեոշամանիզմ, նեոմոգություն և այլն), թեև առանձին ուղղություններ, համայնքներ

կարող են ունենալ հատուկ ինքնանվանումներ՝ Վիկկա, Արորդի, Ռոդնովերներ և այլն: Բոլոր նեոհեթանոսական շարժումները, թեև ունեն ընդհանուր հիմնագծեր (բազմաստվածություն, ակունքներին վերադարձի գաղափար, թույլ արտահայտված կամ բացակայող հիերարխիկ կառուցվածք և ուսմունքային դրույթներ և այլն) պայմանականորեն բաժանվում են երկու ուղղությունների: Առաջինը, որ առավել տարածում է գտել արևմտյան եվրոպական քաղաքակրթության շրջանակներում, բնութագրվում է հետևյալ հատկանիշներով. այն մեծ մասամբ ֆեմինին է, այսինքն՝ ներկայացված է մեծ մասամբ կանանցով և ուղղված է մայր-աստվածուհու պաշտամունքի զարգացմանը, առանձնահատուկ շեշտադրում է էկոլոգիական գաղափարները, ապակենտրոնացված է, և հիմնականում ուղղված է հոգևոր, սպիրիտուալ փորձի ձեռք բերմանը: Այն օգտվում է ոչ միայն իր «ազգային», այլև այլ արխայիկ ժողովուրդների ավանդույթներից: Երկրորդը, որ տարածված է հիմնականում արևելյան եվրոպական և նախկին խորհրդային տարածաշրջաններում, հիմնովին տարբերվում է առաջինից: Այն մասկուլին է, անդամների մեծ մասը տղամարդիկ են, և նրանք էլ որոշիչ դեր են խաղում գաղափարների և պրակտիկաների զարգացման և իրականացման գործում, կենտրոնական պաշտամունքի առարկա են հնդեվրոպական պանթեոնի ամպրոպամարտ Աստծո ազգային տարբերակները, ունի խիստ ազգայնական ուղղվածություն՝ անգամ իր ծայրահեղ դրսևորումներով, կենտրոնաձիգ է և շեշտը դնում է գաղափարախոսության զարգացման և տարածման վրա՝ սակավ կարևորելով հոգևոր փորձը:

Հայ նեոհեթանոսները պատկանում են երկրորդ ուղղությանը: Հայ նեոհեթանոսների համայնքի ինքնանվանումը «Արորդիների ուխտ» է: Այն հիմնվել է 1990 թվականին երջանկահիշատակ Սլակ Կակոսյանի (1936-2005) կողմից, որը եղել է համայնքի առաջին քրմապետը: Ինքնանվանումն ունի որոշակի բացատրություն: Սկզբնական շրջանում ենթադրվում էր յուրացնել «արևորդի» բառը, որը կրել է Գրիգոր Մագիստրոսի և Ներսես Շնորհալու հիշատակած «աղանդը», որը ենթադրաբար «հեթանոսների» (զրադաշտության հետևորդների) մնացորդներից էր բաղկացած: Սակայն ավելի ուշ որոշվեց, որ այս անվանումը չի փոխանցում իրական բովանդակությունը և այն փոխարինվեց «արորդի»-ով, որի հիմքում ընկած են Արայի և Արի-ի /առաջին հայ մարդու/ ժառանգների գաղափարը: «Ուխտ» բառը կրկնօրինակում է Նժդեհի «Դավիթբեկյան ուխտեր»-ը, քանի որ Նժդեհի ազգայնական գաղափարներն ընկած են արորդիների կրոնական գաղափարախոսության հիմքում: Սլակ (Էդուարդ) Կակոսյանը դեռ 70-ական թվականների վերջին արտաքսված էր Խորհրդային Միությունից այլախոհության համար: Այնտեղ նա մոտիկից ծանոթացել է Նժդեհի ողջ մնացած մի քանի զինակիցներին, ինչպես նաև Նժդեհի գաղափարներին: Նժդեհի «Ցեղակրոն» -ը, որը ինչպես ինքը՝ Նժդեհն է շեշտել, սովորական կրոնի հետ ոչ մի կապ չունի, այնուամենայնիվ կրոնական համակարգի մշակման դրդապատճառներից մեկը դարձավ, որի նպատակն է

հայերին վերադարձնել իրենց մինչքրիստոնեական մշակույթի հզորությունը և հարստությունը, որը, ըստ արորդիների, իսպառ ոչնչացվել և նսեմացվել է օտարներից փոխառած կրոնի՝ քրիստոնեության կողմից: «Ցեղակրոն»-ը շարադրելիս Նժդեհը մեծ դեր է հատկացնում այլաբանությանը, փոխաբերությանը՝ օգտագործելով կրոնական և առասպելաբանական հասկացությունները: Օրինակ, հայ ազգը («ցեղը») համեմատվում է հունական Ատլաս տիտանի հետ, որն իր ուսերին պահում է ամբողջ հայությանը: Հայկը՝ հայերի առասպելական նախահայրը, և պատերազմի աստված Վահագնը Նժդեհի համար սիմվոլներ են, որոնց վիճակված է վերակենդանացնել հայոց ոգին, պայքարի մղել հայ ազգին (չմոռանանք, խոսքը ցեղասպանության և առաջին հայկական պետության անկմանը հաջորդող երկու տասնամյակների մասին է): «Ես ցեղակրոն եմ, եւ ահա կ'երդնում Վահագնի աջի վրա, երբեք չմեղանչել ուխտիս դեմ, որ է՝ ապրիլ, գործել եվ մեռնիլ որպէս ցեղակրոն», - գրում է նա Ցեղակրոնի «Հավատամք»-ում:

Կակոսյանը լայնորեն օգտագործում է «Հավատամքը» և Նժդեհի այլ ստեղծագործությունները իր «Ուխտագրքի» համար, որտեղ Նժդեհի այլաբանական կերպարները գտնում են ուղղակի կրոնական կիրառություն: Ընդ որում, ինքը՝ Նժդեհը, որպէս անհատականություն, «Ուխտագրքում» վերածվում է պաշտամունքի առարկայի, մարդ-աստվածության, որի շուրջ հյուսվում է մի ամբողջ առասպելաբանություն, ինչպէս նաև յուրահատուկ պաշտամունքային պրակտիկաներ: Նա ներկայանում է որպէս մարգարե, «վահագնատես», որի օգնությամբ և առաջնորդությամբ հայ ազգը պիտի վերագտնի իր նախնին գորությունն ու մեծությունը:

Դեռ ԱՄՆ-ում բնակվելիս Կակոսյանը «օծվում է» քրմապետ և իրեն համարելով Մովսես Խորենացու հիշատակած Սլկունիների քրմական տոհմի ժառանգորդ՝ Սլակ անունն է ընդունում: Իր «օծման» մասին «լեզենդը» ասում է, որ սկբից նա մտադիր էր «օծում» ընդունել ԱՄՆ-ում գործող նեոգրադաշտական համայնքի քրմերից: Սակայն հետո Նժդեհի հետևորդները նրան հուշեցին, որ ավելի ճիշտ է օծում ստանալ հենց Նժդեհի զինակիցներից մեկի ձեռքով, որով նա բառացիորեն Նժդեհի սուրբ աջն է սեղմում: Այսպիսով, Կակոսյանը դառնում է իր իսկ առասպելաբանությամբ ստեղծած մարդ-աստված Նժդեհի իրավահաջորդը:

Վերադառնալով Հայաստան՝ Խորհրդային Միության փլուզումից հետո 90-ական թթ. սկզբներին Սլակ Կակոսյանը իր շուրջն է հավաքում խոհակիցներին և ձեռնամուխ է լինում նեոհեթանոսական համայնքի ստեղծմանը՝ այն գրանցելով որպէս կրոնական կազմակերպություն: Հենց այդ ժամանակ էլ սկսում է ձևավորվել համայնքի տոնածիսակարգը: Համայնքի գլխավոր ծիսավայր է դառնում Գառնիի «հեթանոսական» տաճարը:

Արորդիների համայնքի կայացումը համընկավ Հայաստանի համար ճակատագրական ժամանակաշրջանի՝ անկախության հաստատման, Արցախյան պատերազմի և նոր քաղաքական ուժերի ձևավորմանը: Արորդիների համայնքի հետևորդներից Աշոտ Նավասարդյանը դառնում է Հանրապետական կուսակցության հիմնադիրներից մեկը: Հանրապետական կուսակցության շարքերում արորդիների համակիրների որոշակի քանակության առկայությունը նպաստեց այդ շարժման կայացմանը: ԶԼՄ-ները հետաքրքրություն են դրսևորում այդ շարժման նկատմամբ և Մլակ Կակոսյանին պարբերաբար հրավիրում են հեռուստաստուդիաներ, որտեղ նա հնարավորություն է ունենում բարձրաձայնել իր ուսմունքի և շարժման սկզբունքներն ու գաղափարները: Այդ հետաքրքրությունը պահպանվել է մինչ օրս: Գառնիում անցկացվող տոնախմբությունները ԶԼՄ-ների բավական սովոր զանգված են միշտ հավաքում, և դրանք լուսաբանվում են գրեթե բոլոր հիմնական ալիքներով:

Քաղաքական տարրի առկայությունը արորդիների շարժման մեջ միանշանակ չէ: Մի կողմից՝ քրմերը աշխատում են զերծ մնալ քաղաքականությունից, և քրմերի քաղաքական կուսակցություններին անդամությունն անգամ արգելված է: Սակայն շարքային արորդիներից շատերն ակտիվորեն մասնակցում են երկրի քաղաքական անցուղարձին՝ անդամակցելով տարբեր, այդ թվում՝ ազգայնական ուղղություն ունեցող կուսակցություններին, որոնցից են Նժդեհյան կուսակցություն, Հայ արիական միաբանություն և այլն: Հարկ է նշել, որ շարժման քաղաքական կողմն սկզբնական շրջանում ավելի ուժեղ էր արտահայտված, սակայն գնալով այն ներքին պառակտումների պատճառով տեղի տվեց, իսկ ծայրահեղագույն քաղաքական շերտը (Հայ արիական միաբանության անդամները) լքեց համայնքը՝ իր այլընտրանքային համայնքը հիմնելով: Դրա փոխարեն ուժեղացել է ներհամայնքային կառուցվածքը, որը հանգեցրեց տեղական համայնքների (օր.՝ Աբովյանում) ստեղծմանը: Գնալով աճում է նաև բուն կրոնական, միաստիկական բաղադրատարրը :

Նեոհեթանոսական համայնքների սոցիալական կառուցվածքի հիմքում, ինչպես նշում են բազմաթիվ հետազոտողներ, ընկած է այն շերտը, որը սովորաբար ընդունված է «մտավորականություն» կոչել: Արևմտյան ուղղությունում դրանք հիմնականում ցածր և միջին եկամուտներ ունեցող մտավորականներն են, որոնք «չեն կայացել» ընդունված չափանիշների համաձայն և «կայանում են» կրոնական ուղղության շրջանակներում, որտեղ իրենց մտավոր և ստեղծագործական կարողությունները կարող են հաջողությամբ կիրառվել: Նեոհեթանոսների համայնքների հիմնադիրների ճնշող մեծամասնությունը «քաղաքային, սեկուլյար մտավորականության ներկայացուցիչներ են, որոնց համար կրոնը առաջին հերթին արժեքավոր մշակութային ժառանգություն է»: Հայ արորդիների համայնքը հիմնականում համապատասխանում է այդ բնութագրումներին: Անդամների մեջ կարելի է տեսնել ցածր և միջին կարգի պետական ծառայողների, մարզինալ արվեստագետների, ազգակցական միությունների և ազգայնական

կազմակերպությունների նախագահների, մանկական սկաուտական կազմակերպությունների մանկավարժների, լրագրողների, տարբեր պարբերականների խմբագրերի և այլն: Ձգալի մաս են կազմում նաև այժմ մանր և միջին ձեռնարկատիրության բնագավառում զբաղված «նախկին» մտավորականները՝ ինժեներներ, մատեմաթիկոսներ, պատմաբաններ ու բանասերներ: Այնուամենայնիվ, վերջին ժամանակներում արորդիների հետևորդների սոցիալական կազմը սկսել է ընդլայնվել քաղաքային և գյուղական բնակչության ոչ մտավորական խավերի հաշվին: Ընդհանուր առմամբ, նեոհեթանոսների թիվը հավանաբար հասնում է հազարի, սակայն հաշվարկը դժվարացնում է այն փաստը, որ նրանց մեծ մասը համայնքի առաջնորդների հետ ակտիվ կապ չի պահպանում: Քիչ թե շատ ակտիվ անդամներն արդեն հարյուրից ավել են, իսկ «կնքվածների» քանակը շարունակ աճում է: Օրինակ, խոշոր տոնախմբությունների ժամանակ կնքվում է 5-10, երբեմն նաև ավելի մարդ, որոնց թվում կան նաև սփյուռքահայեր:

Գոյություն ունի նաև նեոհեթանոսության համակիրների մի շերտ, որ ակտիվորեն այցելում է տոնախմբություններին կամ արորդիների այլ միջոցառումներին՝ կնքված արորդի չլինելով: Պետք է նշել, որ արորդիները չեն վարում որևէ ակտիվ և լուրջ քարոզչական գործունեություն՝ նոր անդամներ ձեռք բերելու համար, ինչպես նաև խտրականություն չեն դնում կնքված արորդիների և համակիրների միջև: Մյուս կողմից՝ կնքվելու արարողակարգը պարզ է, կառուցվածքով և ներքին իմաստով մոտ է քրիստոնեականին: Վերջերս ներմուծվել է նաև կնքահոր՝ քավորի ինստիտուտը, որն ավելի է մոտեցնում այդ երկու արարողակարգերը, թեև քավորի ու սանիկի փոխհարաբերությունները խիստ կանոնակարգված չեն, այլ մնում են կողմերի հայեցողությանը:

Սկզբնական շրջանում արորդիների տեղեկատվության տարածման ուղիները շատ համեստ էին, սակայն վերջերս նրանք ակտիվորեն սկսեցին օգտվել համացանցից, ունեն կայքէջեր՝ ([www.arordineriukht.am](http://www.arordineriukht.am), <http://vahagnakanch.wordpress.com/>), որոնցից երկրորդը հիմա պատկանում է արորդիների անջատված խմբին, իսկ առաջինը դեռ կայացման ընթացքում է: Բացի այդ, արորդիների մասին տեղեկատվությունն ակտիվորեն տարածվում է համաժողովներում և արորդիների անհատական բլոգներում: Արորդիների հիմնական աղբյուրը՝ «Ուխտագիրքը», առաջին անգամ լույս է տեսել 1998 թ. և վերահրատարակվել 2005-ին՝ որոշակի փոփոխություններով: Նրա էլեկտրոնային տարբերակը կարելի է գտնել նաև համացանցում:

Ինչո՞ւ են մարդիկ դառնում նեոհեթանոս կամ արորդի: Շարժման առաջին հետևորդները Կակոսյանի ուսմունքի մեջ տեսնում էին ազգ, հայություն, ազգային

հավատ, ազգային մշակույթ, հայրենիք հասկացությունների վերաբերյալ իրենց մտքերի և զգացմունքների գաղափարական ձևավորումը: Հայոց պատմական ճակատագրում քրիստոնեության խաղացած քաղաքական և մշակութային դերի վերախմաստավորումը նեոհեթանոսության հանդեպ հետաքրքրության աճը պայմանավորող գործոններից մեկն էր: Ժամանակակից դիսկուրսներում հակաքրիստոնեական դրույթներն ունեն տարբեր ուժգնության և բովանդակային դրսևորումներ: Կան դիսկուրսներ, որոնք անգամ օգտագործում են «ցեղասպանության» հոնետրականությունը՝ նախաքրիստոնեական մշակույթի և քրմական դասի վերացումը կոչելով «ցեղասպանություն», իսկ Գրիգոր Լուսավորչին անվանելով Լուսամարիչ: Այլ դիսկուրսներում շեշտադրվում է քրիստոնեության ապազգային, կոսմոպոլիտ բնույթի, ներողամտության և հեզության, բռնությանը բռնությամբ չպատասխանելու սկզբունքների անընդունելիությունը: Ծայրահեղագույն բնույթի դիսկուրսներում քրիստոնեությունը դիտվում է օտար, հատկապես սեմական ուժերի կողմից հայերին կործանելու նկրտումների մարմնավորում: Հակասեմականությունը բնորոշ է երկրորդ ուղղությանը պատկանող նեոհեթանոսական գրեթե բոլոր շարժումներին և դա առավել վառ արտահայտված է սլավոնական երկրներում:

Գնալով նկատելի են դառնում մոտիվացիաների և պատճառաբանության որոշակի փոփոխություններ: Առաջանում են միստիկայի, կրոնական զգացման, հրաշքին հավատալու միտումներ և տարբեր: Դրա օրինակներից է Անահիտ անունով մոտ 35 տարեկան կնոջ պատմությունը, որի հետ զրուցել եմ 2008թ. ամռանը Գառնիում՝ Վարդավառի տոնակատարության ժամանակ: Նա և նրա դուստրը իմ աչքերի առաջ կնքվեցին և դարձան արորդի: 10 տարի ամուսնացած լինելով՝ նա զավակ չէր ունենում, թեև աղոթում էր Աստծուն, ուխտի գնում զանազան սուրբ վայրեր: Հետո լսելով հեթանոսների մասին՝ նա մտքում սկսեց աղոթել հեթանոսական աստվածներին, հատկապես մայրության աստվածուհի Անահիտին և շուտով հղիացավ: Իր նորածին դստերը նա կոչեց Նանե աստվածուհու անվամբ և այդուհետ իրեն հեթանոս է համարում: Մեկ ուրիշ արորդի պատմում էր իր վահագնատեսության դեպքերի մասին՝ մանրամասն նկարագրելով, թե որտեղ և ինչպիսի տեսիլքներ է ունեցել: «Վահագնատեսությանն» են ձգտում և այլ արորդիներ, հատկապես քրմերը: Այսպես, ամեն տարի նրանք խմբով ձեռնարկում են ուխտագնացություն դեպի Խուստուփ լեռը, որի գագաթին անցկացնում են մի գիշեր, հուսալով, որ վահագնատեսության փորձ են ունենալու: Սակայն նման երևույթները դեռ զանգվածային բնույթ չեն ստացել:

Արորդիների հիմնական գաղափարախոսությունն ու առասպելաբանությունը արտահայտված են «Ուխտագրքում»: «Ուխտագրքի» ստեղծողն է տյար Սլակ Կակոյանը, որին ոչ թե հեղինակ են համարում, այլ «կազմող», քանի որ համարում են, որ նա միայն կազմեց այս գիրքը արդեն իսկ ի վերուստ ստեղծած

բաղադրամասերից: «Կազմելու» ընթացքում Կակոսյանը, ըստ երևույթին, առատորեն օգտվել է մի քանի հանրաճանաչ աղբյուրներից՝ Մովսես Խորենացու «Հայոց Պատմությունից», Աստվածաշնչից՝ Հին ու Նոր Կտակարաններով, Գարեգին Նժդեհի հիմնական երկերից: Սակայն այդ աղբյուրներից քաղած նյութերը վերաշարադրված են բավական ազատ, զգալիորեն համալրված, վերափոխված և վերաիմաստավորված հենց իր՝ Սլակ Կակոսյանի կողմից: «Ուխտագրքի» նկատմամբ (հատկապես նրա առասպելաբանական հատվածի՝ Արարատյան դիցաբանության) վերաբերմունքը նույնիսկ արորդիների կողմից այլ է: Կան մարդիկ, որոնք չեն ընդունում հայկական աղբյուրներում զետեղված առասպելների և պատումների՝ Ս. Կակոսյանի հավելումները : Շատերն այն որպես սուրբ գիտելիքի աղբյուր ընդհանրապես չեն ընդունում: Սակայն Արորդիների ուխտն ունի նաև Ս. Կակոսյանի ստեղծագործական գործունեության իր մեկնաբանությունը, որը բխում է նեոհեթանոսության հենց բնույթից: Ընդունելով, որ հնագույն աղբյուրներում զետեղված պատումներն ու առասպելները հին հայերի ստեղծագործական մղումների արդյունք էին, ապա ինչու ժամանակակից հայերը, լինելով իրենց նախնիների թե՛ գենետիկ, թե՛ հոգևոր հետնորդներ, չեն կարող ժառանգել և շարունակել ստեղծելու ներքին կարողությունն ու պահանջը: Թեև դա իրականում բացահայտ աշխարհիկ մտածելակերպի դրսևորում է, սակայն հիմնավորում է «Ուխտագրքի» նկատմամբ վերաբերմունքի կրոնական մակարդակը, որն արտահայտվում է Սլակ Կակոսյանի գրածին անվերապահորեն հավատալու առանձին դեպքերում:

Կառուցվածքաբանորեն «Ուխտագրքը» բաժանվում է 7 մասի: Առաջին մասը կոչվում է «Աստվածաշունչ» կամ «Հայոց լեզվի խորհրդարան», որի մեջ խոսքը աստվածաշունչ հայոց լեզվի մասին է, որ այն ազգածին խորհուրդների համակարգ է, որոնք զետեղված են բառարմատներում: Այսպիսով, «Ուխտագրքի» այս մասը արմատական բառարան է, որը փորձում է մեկնաբանել հայերենի արմատների բարձրագույն միաստիկ խորհուրդը: Օրինակ, բառարանի առաջին հոդվածներից մեկը Արարմատն է մեկնաբանում:

«Կենսակերտ» բառարմատը, որ նշանակում է ՍԵՐՈՒՄ, ԾԱԳՈՒՄ, ԶՈՐՈՒԹՅՈՒՆ, ՈՒԽՏ, համապատասխանում է ԱԶ արմատին:

ԱԲ - կենսակերտ արմատը հայերենում գրեթե ամենաշատ գործածվող արմատն է: Այն մտնում է ամենաբազմազան բաղադրությունների մեջ՝ կազմելով ՍԵՐՈՒՄ, ԾԱԳՈՒՄ, ԶՈՐՈՒԹՅՈՒՆ, ՈՒԽՏ արտահայտող խորհուրդներ:

Օրինակ՝ արյուն, արգանդ, արմատ, արև, մարդ, արքա, դար, զարուն, բարի, չար, Արա, Արի, արտ, արու.. »:

«Ուխտագրքի» այս մասը ամենահեղինակայինն է, սակայն, ի տարբերություն նման «լեզվագիտական» բազմաթիվ գործերի, գիտնականների քննադատությունից վեր է, քանի որ չի հավակնում գիտական լինելու, այլ, ըստ որոշողիների, հիմնվում է ի վերուստ ստացած հայտնության վրա:

Հաջորդ բաժինը կոչվում է «Ծագումնաբան» կամ ՏԱրարատյան դիցաբանություն: Այս մասը պատմում է աշխարհի և մարդու արարման, «արիա-հայկական» պայմանական պանթեոնի աստվածությունների՝ Արայի, Անահիտի, Աստղիկի, Միհրի, Տրի, Յահվահի և Վիշապի փոխհարաբերությունների մասին: Ինչպես տեսնում ենք, Կակոսյանը, հիմնականում պահպանելով հին հայկական պանթեոնի աղբյուրներից մեզ հայտնի աստվածությունները, դրանց ավելացնում է ևս երկուսը, որոնց ծագման, գործառույթների և աստվածային ու մարդկային աշխարհի հետ փոխհարաբերությունների մասին ծավալվում է «Ուխտագրքի» այս հատվածում: Առասպելների պյուժեները «վերակազմված են» հայտնի աստվածաշնչյան և ավետարանական պյուժեների ազատ օգտագործմամբ և բազմաթիվ հորինված մանրամասների ավելացմամբ: Առասպելները կազմված են այնպես, որ յուրաքանչյուրը միաժամանակ դառնա արորդիների տոնածիսակարգի մաս կազմող տոների՝ Տրնդեզի, Զատիկի, Համբարձման, Վարդավառի, Խաղողօրհնեքի, Նախնիների տոնի, Նավասարդի և, իհարկե, Նոր տարվա կամ Վահագնի ծննդյան տոնի ծագման մեկնաբանության և տոնի հիմնական խորհրդի բացահայտման աղբյուր: «Ծագումնաբանը» ունի նաև առանձին հրատարակություն «Արարատյան դիցաբանություն» անվամբ:

«Ծագումնաբան»-ին հաջորդում է «Ավետարանը»՝ աստվածների իմաստությունը արտահայտող խրատները, ապա «Ձոնարանը», որը արորդիների հիմնական արժեքներին՝ Հավատքին, Բացարձակությանը, Լինելիությանը, Վերածննդին և աստվածներից յուրաքանչյուրին ձոնած տեքստերի հավաքածու է: Հաջորդ երկու գրքերը՝ «Վեհարանն» ու «Պատգամարանը», Գարեգին Նժդեհի կենսագրական առասպելի և նրա ուսմունքի վերաշարադրումն են: Վերջապես, յոթերորդ գիրքը՝ «Հիմներգարանը», հեթանոսական հիմների հավաքածու է, որոնց մեծ մասը գրել է հենց ինքը՝ Կակոսյանը և, մասամբ, նրա հետևորդները: Որպես հիմներ՝ օգտագործված են նաև 19-րդ և 20-րդ դարերի հայ բանաստեղծների ստեղծագործությունները, ներառյալ՝ Ս. Կակոսյանի և նրա հետևորդների: Բոլոր հիմների հեղինակը նշվում է բովանդակության ցանկում:

Ինչպես նշեցինք, «Ուխտագիրքը» հեթանոսական ծիսակարգի մեկնաբանության հիմնական աղբյուրն է: Այն նաև հիմք է ծեսերի բովանդակային, խորհրդաբանական և դինամիկ կառուցման համար: Արորդիների ծիսակարգը անընդմեջ մշակման գործընթացում է և ամեն անգամ ավելանում կամ պակասում են ինչ-որ



բաղադրամասեր, որի պատճառը թե՛ գաղափարական, թե՛ տեխնիկական կարող է լինել: «Ուխտագիրքը» միաժամանակ ծեսերի հիմնական ծիսական ատրիբուտներից է: Ծեսն արարող քուրմը այն ձեռքում է պահում, նրանով օրհնում է, նրա վրա երգվում են , այսինքն՝ կրկնօրինակում է առհասարակ Սուրբ Գրքի բոլոր հիմնական գործառույթները: Միաժամանակ, այն, որպես այդպիսին, սրբություն չէ, այսինքն՝ «Ուխտագրքի» հետ դեռ կապված չեն հրաշագործության, սրբազան գործության մասին որևէ պատկերացումներ: «Ուխտագրքի» հիման վրա կազմված յուրաքանչյուր ծեսին բնորոշ տեքստային մասը արտաստվում է սովորական թղթի վրա և ծեսի ընթացքում ընթերցվում քրմերի կողմից: Ծիսական տեքստերի անգիր իմանալը չի պարտադրվում: Չկան նաև ընթերցելու նկատմամբ հատուկ պահանջներ՝ կապված ձայնի երանգավորման, արագության, կրկնությունների և այլ առանձնահատկությունների հետ:

Արորդիների հիմնական ծիսական տեքստը Մովսես Խորենացու երկի մեջ գետեղված՝ «Վահագնի ծնունդը» հայտնի հնագույն էպիկական ստեղծագործության մի հատվածն է: Նրանով հաճախակի սկսվում և ավարտվում են ծեսերը: Ընդ որում, կան վիպասանության այդ հնագույն նմուշի արդիականացված տարբերակները, օրինակ՝ «Վահագնի ծնունդը» հիմնը, որի երաժշտության և տեքստային հավելումների հեղինակն է երգիչ և երգահան Արսեն Ղամբարյանը: Դրանք խորհրդանշում են հին ու ժամանակակից հայերի ժառանգականության սկզբունքը: Այդ հիմնը գնալով դառնում է ծեսերի և միջոցառումների էական մաս: Մովորաբար Վահագնի ծննդի կատարումը (թե՛ երգի, թե՛ աղոթքի տեսքով) ուղեկցվում է «Փառք Վահագնին» կոլեկտիվ բացականչությամբ:

«Ուխտագիրքը» մեզ պատկերացում է տալիս նաև արորդիների աստվածաբանական և գաղափարաբանական շրջանակների մասին: Վերը նշված հայ-արիական պանթեոնի աստվածություններն ունեն վառ արտահայտված դուալիստական բնույթ, այսինքն՝ Տլավի, «բարի», «արարիչ» աստվածությունները հակադրված են «չար», «ավերիչ» աստվածություններին (Յահվահն ու Վիշապը և նրանց մարմնավորող «չարիները» ի հակակշիռ արարիչ աստվածներին պաշտող արիների): Ըստ այդմ, մարդկության ողջ պատմությունն էլ է դիտվում որպես բարի ու չար ուժերի միջև մղված պայքար, որտեղ պարբերաբար հաղթում են թե՛ առաջինները, թե՛ երկրորդները: Արիների հայրենիքը Արարատն է, Հայկական լեռնաշխարհը, որը դրախտավայր է, իսկ «չարիների» ծագումնավայրը անապատն է, որտեղից նրանք շարունակ հարձակվում են Արարատի վրա և փորձում ոչնչացնել արիներին:

Նմանապես դիտվում են և բնության ցիկլիկ փոփոխությունները՝ տիեզերական ամռանն ու աշնանը հաջորդում է տիեզերական ձմեռը /չարիների հաղթանակի խորհրդանիշը/, իսկ այն, իր հերթին, փոխարինվում է տիեզերական գարունով, որն

արիների հաղթանակն է հռչակում: Գարունը՝ բնության զարթոնքը, խորհրդանշում է արիների՝ հայերի զարթոնքը և վերակենդանացումը, երբ նրանք նորից վերածվում են երկրային աստվածությունների: Հետո ուրանալով իրենց արմատները՝ կրկին թուլանում են և հնարավորություն են տալիս չարիներին տիրանալ նրանց մինչև հերթական տիեզերական զարնան սկիզբը:

Նման ընկալումները մոտեցնում են հայ նեոհեթանոսներին ժամանակակից միլենարիստական շարժումներին, որոնք մեր ժամանակը անցումային են դիտարկում և համարում են, որ այն տանում է դեպի ժամանակաշրջանների փոփոխություն, հին աշխարհի վախճան և նոր աշխարհի ծնունդ: Ըստ արորդիների՝ տիեզերական զարնան զալուն պես կսկսվի նաև մաքրագործող աղետների փուլաշրջանը: Նման իրողություն արդեն տեղի է ունեցել հայոց Ցեղասպանությունից և բոլշևիկների ագրեսիայից հետո, երբ գերագույն ճգնաժամին հաջորդեց աստվածային էներգիայի ծնունդը, երբ Գարեգին Նժդեհը մենակ մնաց Խուստուփ լեռան գագաթին և Վահագնի հայտնությունն ապրեց, որից հետո նա պատվիրեց հայերին խոսել և ապրել Վահագնի հետ: Դա Նժդեհին կարգում է նորագույն ժամանակների մարգարե և միաժամանակ աղերս է դառնում ժամանակակից հայերի և նրանց նախաքրիստոնեական ավանդույթների միջև:

Ընդհանրապես, արիական ինքնությունը, որը տարածվում ու զարգացվում է արորդիների կողմից, հետաքրքրության արժանի երևույթ է: Այն, ընհանուր առմամբ, հակադրվում է քրիստոնեական ինքնությանը և գաղափարախոսությանը բնորոշ արժեքներին (գոհողություն, ենթարկվածություն ճակատագրին, թշնամու նկատմամբ ներողամտություն և սեր, պատասխան բռնությունից հրաժարվելը և այլն): Այլ խոսքով, քրիստոնեությունը ստիպեց հայերին հրաժարվել իրենց արիական նախնիներին բնորոշ հատկություններից և արժեքներից, որը թուլացրեց հայերի քաղաքական և մշակութային դիրքերը:

Մյուս կողմից, արիական ինքնությունը արյունակցական և ազգակցական կապերը կարևորում է կրոնական համոզմունքներից: Այն էթնոկենտրոն է և հանում է հայերի միջև գոյություն ունեցող բոլոր կրոնական խտրականությունները: Հայ արիական ինքնության համար հավասարազոր են առաքելական, կաթոլիկ, բողոքական, աթեիստ, հեթանոս և այլ կրոնական ուղղություններին պատկանող հայերը, որոնք չեն հրաժարվում իրենց հայությունից: Հայ արիական ինքնությունը որոշ չափով համահունչ է և այսօրվա քաղաքական իրավիճակին: Եթե մինչև անկախությունը քրիստոնեական մշակույթը՝ եկեղեցիներն ու վանքերը, գրչությունը, խաչքարերը, պատմագրությունն ու մանրանկարչությունը հայերին բնորոշող այցեքարտ էին, ապա անկախ Հայաստանի համար ավելի պահանջված են դառնում մինչքրիստոնեական ժամանակաշրջանում, հատկապես Տիգրան Մեծի օրոք

Հայաստանի կայսերական նկրտումները և տարածքային ձեռքբերումները: Նեոհեթանոսները, այսպիսով, իրենց համարում են Արտաշեսյանների պետության ուղղակի ժառանգներ՝ բաց թողնելով 1700 տարի տևողությամբ հայոց պատմության ժամանակաշրջանը:

Իհարկե, ոչ բոլոր նեոհեթանոսներն են ժխտում քրիստոնեությունը: Ոմանք ճանաչում են այդ կրոնի յուրահատուկ դերը հայոց պատմության և մշակույթի մեջ՝ դա բացատրելով հայ առաքելական քրիստոնեության առանձնահատկությամբ: Հայ նեոհեթանոսները, ինչպես նշվեց, ակտիվորեն օգտվում են հին աղբյուրներում զետեղված նյութերից՝ նախաքրիստոնեական ծիսակարգն ու խորհրդաբանությունը վերականգնելու կամ «վերակազմելու» համար: Հայաստանում պահպանված և 1975թ. վերականգնված մինչքրիստոնեական Միհր աստծու տաճարը Գառնիում վերածվեց նեոհեթանոսների ծիսակատարությունների հիմնական վայրի: Հնագիտությունը առհասարակ նեոհեթանոսների համար նորանոր սրբավայրերի ձեռքբերման աղբյուր է: Այսպես, Գառնիից բացի, ուխտագնացության և ծիսակատարությունների վայրեր են բրոնզեդարյան հնավայրեր Շենգավիթն ու Մեծամորը, ուրարտական դարաշրջանի հնավայրերը (Արգիշտիհիլիլին, Էրեբունին), Զորաց քարեր մեգալիտիկ հուշարձանը և այլն: Իրենց հիմքում նախաքրիստոնեական կառույցներ ունեցող որոշ քրիստոնեական տաճարներ (Էջմիածնի մայր տաճարը, Հոփսիմե եկեղեցին և այլն) ևս կարող են սրբազան նշանակություն ունենալ արորդիների համար: Հիմա Երևանում և Հայաստանի այլ վայրերում նոր հեթանոսական տաճարների կառուցման հարցն են արծարծում նեոհեթանոսները: Սակայն մինչ օրս Գառնիի տաճարը արորդիների ծիսական գործունեության կենտրոնական վայրն է: Տաճարի տարածքը ժամանակի ընթացքում «յուրացվել» և թեթևակի վերափոխվել է՝ ավելի համապատասխանեցվելով ծիսական կարիքներին: Այսպես, առաջացել են ծիսական ծառերը և անգամ փոքրիկ այգին՝ Կակոսյանին նվիրված աղբյուր-հուշարձանը:

Որպես հուշակոթողներ են ընկալվում նախաքրիստոնեական աստվածություններին և առասպելաբանական հերոսներին մարմնավորող՝ Երևանի տարբեր վայրերում կանգնեցված ժամանակակից քանդակ-արձանները (Հայկի, Վահագնի, Տորք Անգեղի): Դրանք նեո-հեթանոսական պատկերագրության մեջ նույն դեր են խաղում, ինչ հայտնի հին քանդակները (Նեմրոթ լեռան քանդակները, Անահիտի գլուխը և այլն): Համանմանորեն, հայ առասպելաբանության հնուց պահպանված դրվագները հաջողությամբ համալրվում են 19-20-րդ դդ. հայ բանաստեղծների և գրողների ստեղծագործություններով, որոնց նույն կրոնական բնույթն է վերագրվում (Դ. Վարուժան, Սիամանթո, Լ. Շանթ, Կ. Զարյան, Ն. Զարյան, Պ. Սևակ և այլն):

Ըստ երևույթին, տեղի է ունենում ժամանակաշրջանների նույնացում: Նրանք, ովքեր հնում ստեղծում էին աստվածների քանդակներն ու նրանց ձոնված հիմները

հավասարվում են նրանց հետ, ովքեր դա անում են հիմա կամ ոչ հետավոր անցյալում: Դա նեոհեթանոսների մտածելակերպի առանձնահատկություններից է, որը հայ ժողովրդի ստեղծագործական ոգին դիտում է անդադար գործողության մեջ՝ պատմական շրջաններից, սոցիալական, մշակութային և քաղաքական իրավիճակից դուրս, այն ամենը, ինչ ստեղծվել է արվեստի շրջանակներում՝ մեկնաբանելով որպես հեթանոսական մտածելակերպի և կրոնական զգացմունքների հանկարծակի պոռթկումներ՝ «Եթե մեր նախնիները կարողացել են ստեղծել այդ բոլոր առասպելներն ու ծեսերը, ինչու՞ մենք չենք կարող»: Եթե Սլակ Կակոսյանը, ստեղծելով «Ուխտագիրքը», իր հայեցողությամբ փոփոխում կամ համալրում էր Մովսես Խորենացու կամ Նժդեհի բնագիր տեքստերը, ապա երգիչ և կոմպոզիտոր Արսեն Համբարյանը ոչ միայն սեփական հիմներն է հորինում, այլև նոր հատվածներ է ավելացնում «Վահագնի ծնունդը» հին հայկական հայտնի առասպելաբանության դրվագին՝ իր գործունեությունը դիտարկելով դարերի խորքից եկող և ավանդույթը շարունակող:

Նեոհեթանոսների ծիսակարգը դեռ իր ձևավորման գործընթացում է, թեև գլխավոր ծեսերի հիմնավորումն ու խորհրդաբանությունը տրված են «Ուխտագրքի» համապատասխան գլուխներում և արդեն իրենց խոսքային, կատարողական և առարկայական դրսևորումն ստացել են: Ծիսակարգը ներառում է տարեկան տոնական ցիկլի և կենսացիկլի հիմնական ծեսերը: Երկրորդները սակավ զարգացած են, քան առաջինները և մեծ մասամբ մշակվում են արդեն Ս. Կակոսյանի մահվանից հետո: Իր՝ Կակոսյանի մահը մահվան ծեսերի մասին մտածելու առաջին առիթը դարձավ: Նեոհեթանոսների կենտրոնական գաղափարի համաձայն՝ մարմինը պետք է դիակիզվի: Հայաստանում դիակիզումը ընդունված չէ, և նեոհեթանոսները շատ դժվարություններ հաղթահարեցին, մինչև որ կարողացան հասնել իրենց նպատակին: Հիմա դիակիզումը օրինականացված է, թեև այն իրականացնելու հնարավորությունները շատ սահմանափակ են: 2008 թ. արորդիների համայնքը ևս մեկ քրմի մահ ապրեց, որը նպաստեց հուղարկավորման ծիսակարգի հետագա ամրագրմանը: Հոգեհանգիստն անցկացվում էր դիակիզումից առաջ՝ մաքսիմալ կերպով մոտեցված ավանդական հոգեհանգստին, այն տարբերությամբ, որ դրա ընթացքում անցկացվել էր ոչ ծավալուն մի ծես՝ «Ուխտագրքից» հատվածների ընթերցումը պարունակող: Թաղման ժամանակ հողին է հանձնվել սափորում զետեղված աճյունի միայն մեկ երրորդը, իսկ մնացած երկու մասերը «հանձնվել» էին մյուս երկու տարերքներին՝ քամուն և ջրին:

Արորդիները կատարում են նաև մկրտության և պսակադրության ծեսերը /կնունք և պսակ/: Պսակադրությունը կատարվում է տաճարում, իսկ կնունքի համար տաճարում գտնվելը պարտադիր չէ: Անվանափոխություն կնունքի ժամանակ տեղի չի ունենում, իսկ ընթացքում կարևորվում է ոչ թե անունը, այլ ազգանունը՝ տոհմական անունը: Կնունքի եզրափակիչ մասը ներառում է օժման ծեսը, որի ժամանակ

օգտագործում են «ծաղկայուղը»՝ մեռնի նմանակը, իսկ կնքվողի վզից կախում են «արևխաչը»՝ ծաղկանման այսպես կոչված «հավերժության խորհրդանիշը» պատկերող փայտյա, կաշվե կամ մետաղյա սկավառակը: Բացի այդ, «արևխաչից» արորդիների ամենատարածված նշաններից մեկը «կեռխաչն է» կամ սվաստիկան, որը նրանք փորձում են ազատել նացիստական զուգահեռներից:

Պետք է նշել, որ տոների ժամանակ տարերայնորեն կնքվողների մի մասը դա ընկալում է որպես խաղ կամ ռոմանտիկ արարողություն, որն, այնուամենայնիվ, որևէ կրոնական պատասխանատվություն չի հաղորդում նրանց: Կրոնական լրջություն չի պահանջվում նաև պսակադրության ժամանակ, օրինակ, պսակվողները կարող են համատեղել քրիստոնեական և նեոհեթանոսական ծեսերը առանց որևէ բարոյական խնդիրների:

Ավելի մանրամասնորեն մշակված են տարեկան տոնական ցիկլի ծիսակատարությունները: Նրանց մի մասը համընկնում է ժողովրդական տոնախմբությունների հետ, որոնք իրենց զուգահեռներն ունեն քրիստոնեական տոնացույցում: Հատկանշական է, որ արորդիներն իրենց ծիսակարգում ընդգրկում են այդ տոներին համապատասխանող ավանդական ծեսերի մի մասը, այն էլ նրանք, որոնք ընդհանուր են Հայաստանի բոլոր ազգագրական շրջանների համար, պահպանվում և գործածվում են նաև քաղաքային միջավայրում: Օրինակ, Տրնդեզի ժամանակ հիմնական գործողությունը խարույկի վրայից թռչելն է, Զատիկի ժամանակ՝ ներկված գույնզգույն ձվերի առկայությունը, իսկ Վարդավառի ժամանակ՝ իրար ջրելը: Դրան ավելանում է հիմնական ծեսը, որը մի շարք արդեն ավանդական դարձած գործողությունների՝ ծիսական ջահը վառելն է և ծիսական տեքստերն ընթերցելը: Տոները, պահպանելով իրենց ավանդական ժողովրդական անունները, այնուամենայնիվ, վերաիմաստավորվում են, և հաստատվում է նրանց կապը նախաքրիստոնեական պանթեոնի աստվածությունների հետ (Տիր, Անահիտ, Աստղիկ): Ավանդական տոներին ավելանում են նաև արորդիներին բնորոշ մի քանի տոնակատարություններ, որոնցից ամենագլխավորը Վահագնի ծնունդն է կամ Նոր տարին, որը տոնվում է մարտի 21-ին՝ գարնանային գիշերահավասարի օրը: Դեկտեմբերի 21-ին տոնվում է ձմեռային արևադարձի օրը կամ Միհրի տոնը, օգոստոսի 11-ին՝ Նավասարդը, իսկ սեպտեմբերի 19-ին՝ Նախնիների տոնը: Տոները կատարվում են Գառնիում, բայց մի մասը կարող է նշվել նաև ուրիշ սրբավայրերում: Օրինակ, Զատիկը գերադասում են տոնել Մեծամորի հնավայրում, որի անունը կապում են «Մեծ Մոր», այսինքն՝ Անահիտի հետ: Տրնդեզը տոնվում է կամ Էրեբունիում կամ Կարմիր բլուրում: Ծիսակարգի խորհրդաբանության մեկնաբանությունը տրվում է «Ուխտագրքում», և շատ ծեսեր ձևավորվում են այդ խորհրդաբանության ազդեցության ներքո: Օրինակ, գարնանային և ամառային ծեսերի ժամանակ կարևորվում է ծիրանը որպես ծառ և պտուղ: Ծիրանը, այսպիսով, դառնում է արորդիների գլխավոր խորհրդանիշներից մեկը: Ամեն մի տոնի ժամանակ

օրինվում են այդ տոնին համապատասխանող խորհրդանիշներ (պտուղներ, վարդեր, ճյուղեր, հաց կամ գաթա), որոնք հետո բաժանվում են մասնակիցներին: Տոների կառուցվածքը բավականին որոշակի է: Տոնը սկսվում է ծիսական արարողությունից, որին հաջորդում է «մշակութային ծրագիրը» (երգերով, պարերով, համույթների ելույթներով, իսկ հետո՝ խնջույքով): Տոներից բացի, գոյություն ունեն նաև ուխտագնացություններ դեպի՝ արորդիների համար նշանակալից սրբավայրեր (Արագած և Խուստուփ լեռներ): Ուխտագնացությունը դեպի Խուստուփ կապված է Նժդեհի անվան հետ և յուրահատուկ նշանակություն ունի արորդիների համար:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ նեոհեթանոսությունը Հայաստանում հանդես է գալիս որպես բազմազան տարրերի՝ ազգայնական գաղափարախոսության, հայ արիական ինքնության, կրոնական մտածելակերպի, համայնական կազմակերպվածության և հանրայնացման ուրույն ձևերի միացում:

Նեոհեթանոսական շարժումներն աշխարհի արագորեն աճող և տարածվող կրոնական ուղղություններն են, և այդ առումով Հայաստանը համաշխարհային մշակութային գործընթացների մասն է դառնում: Սակայն արորդիների շարժումը ունի մի շարք առանձնահատկություններ, որոնցից երկուսն են հատկապես հետաքրքրական: Առաջինը՝ այն, թե ինչպես ազգայնական ուսմունքը (Նժդեհի «Ցեղակրոնը») վերածվում է կրոնական հայտնության և երկրորդը՝ ինչպես մտավորականության խավի ինտելեկտուալ գործունեության արդյունք համարվող առասպելաբանական և ծիսական համակարգը հետզհետե ձեռք է բերում հետևորդների կրոնական կարիքներին համապատասխանող հոգևոր և միստիկական հատկություններ՝ միաժամանակ ընդլայնելով համայնքի սոցիալական կազմը: Այդ ամենը վկայությունն են այն բանի, որ հայկական նեոհեթանոսությունը իր դինամիկ և բազմաբնույթ նկարագրով ոչ այլ ինչ է, եթե ոչ հետխորհրդային «քաղաքականացված գաղափարախոսության» տեղայնացված ձևերից մեկը:

### **Գրականություն:**

Անտոնյան Յու., 2008 (1), Ինչպես է հերոսը դառնում Աստված. Գարեգին Նժդեհը և հայ նոր հեթանոսները //Հայ ազգագրության և հնագիտության ինդիքները,( 3), Ե., ՀՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, էջ 220-228:

Անտոնյան Յու., 2008 (2) Արիական առասպելը և հայ նոր հեթանոսները, //Ինքնությունը և փոփոխվող աշխարհը, միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., Լինգվա, Հակոբյան Գ., 1964, Ներսես Շնորհալի, Ե.:

Նժդեհ Գ., 2006, Հատընտիր, Ե, Ամարաս:

«Ուխտագիրք», 2005, Ե.:

Антонян Ю.Ю., 2010, Воссоздание религии: неоязычество в Армении, Лабораториум, #1, с.103-128

Шнирельман В., 1998, Неоязычество и национализм: восточноевропейский ареал. М.: ИЭА

Antonyan Yu., Siekiersky K. The children of Ara: neo-paganism in Armenia, manuscript (in print)

Hobsbawm E., 2003, “Introduction: Inventing Traditions,” in: The Invention of Tradition, ed. Eric Hobsbawm, Terence Ranger. Cambridge: Cambridge University Press, pp. 1-15

Morris B., 2006, Religion and Anthropology: a Critical Introduction. Cambridge, Cambridge University Press

Shnirelman V., 2002, “«Christians! Go Home!»: A Revival of Neo-Paganism between the Baltic Sea and Transcaucasia (An Overview).” Journal of Contemporary Religion, 17 (2), pp. 197-211

Rountree K., 2006, Performing the Divine: Neo-Pagan Practices and Embodiment at Sacred Sites. Body & Society, 12 (4), pp. 95-115

## **ՏԵՍԱԴԱՐԱՆ**

«Евангельские церкви в России»

---

**ՆՈՐՈՒԹՅՈՒՆ**

